

ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ

ՎԼԱԴԻՄԻՐ ՍՈՒՆՎՅՈՎ

ՊԱՆԴԻ ՄԱՍԻՆ*

Աղոթքի մեջ Աստծու շնորհը ստանալով, մենք ողորմության ձևով փոխանցում ենք այն (մեր) մերձավորներին, այսինքն՝ ցանկացած գործում, որի ժամանակ (որում) մենք վերջիններս ըստ Աստծու ենք վերաբերում, ինչպես մեզ մեր հավատքն է պարտավորեցնում: Բայց մեր պարտականությունները միայն մարդկանցով չեն սահմանափակվում: Մենք պարտավորություն ունենք բոլոր այն արարածների նկատմամբ, որոնք մեր մեղքի պատճառով ցարդ հառաչում և տառապում են: Եթե մենք Աստծու շնորհը տարածողներն ենք դառնում, ապա պետք է նրա ներգործությունը տարածենք և՛ մեր կենդանական բնության վրա, և՛ մեր ողջ աշխարհի վրա, քանզի անկարելի է սահմաններ ենթադրել աստվածմարդկային զորության համար: Ինչպես մարմնացած Աստված է փրկում մարդկությանը, նմանապես Աստծու հետ վերամիավորված մարդկությունը պետք է փրկի ողջ բնությունը, քանզի ինչպես մարդկությունը հաճին էկեղեցու Քրիստոսի կենդանի մարմինն է, այդպես էլ ողջ բնական աշխարհը պետք է վերածնված մարդկության կենդանի մարմինը դառնա: Բոլոր արարածները պետք է թողություն ստանան և Աստծու որդիների փառքի ազատության մեջ ներմտվեն: Իր ամբողջության մեջ սա տիեզերական գործ է և համաշխարհային պատմական խնդիր: Բայց յուրաքանչյուրը դրանում իր անհատական անմիջական պարտականությունն ունի, քանզի յուրաքանչյուրը սեփական մարմնում կարող է օժանդակել համաշխարհային մարմնի քաղությանը:

Մենք գիտենք, որ ոչ միայն մարդկային հոգին, այլև տիեզերքի մարմինն է աղավաղված վիճակում մեղքի և մահվան իշխանության տակ գտնվում: Ջուր չէ ասված, որ ամբողջ աշխարհը չարի մեջ է: *Ջարը նրանում է, որ հոգին հակառակվում է Աստծուն, իսկ մարմինը՝ հոգուն:* Մեր հոգին չի ուզում, որ իրեն Աստված տիրի, այս իսկ պատճառով ինքն էլ չի կարողանում տեր լինել ո՛չ սեփական մարմնին, ո՛չ աշխարհի մարմնին: Աստծուն պատշաճում է ազատ տիրել մեր հոգուն, զբաղեցնել նրան իր կատարելության ուժով և արտաքին աշխարհի նկատմամբ իր ամենակարողության ուժը նրան հաղորդելով:

Աստված, Ում մեջ ամբողջը մի է և ներդաշնակ, մեր կամքի համար գերագույն բարիքն է հանդիսանում, անվերապահ ճշմարտություն՝ մեր մտքի համար, և կա-

* 19-րդ դարի մեծ մտածող Վլադիմիր Սոլովյովի (1853-1900 թթ.) ներկայացվող գործը մի հատվածն է նրա «Կյանքի հոգևոր ճիմքերը» աշխատության: Թարգմանությունը՝ հեղինակի «Избранные произведения» (Ղոճի Ռոստով, 1998 թ.) հրատարակությունից, էջ 180-186 [սմբ.]:

տարյալ գեղեցկություն՝ մեր զգայարանների համար: Կատարելության այս լրությունըն իբրև մեր ցանկությունների, մտքերի և զգացմունքների սահման ընդունելով, մենք ճշմարիտ անսահմանության ենք հասնում: Բայց մենք ուրիշ անսահմանություն ենք ցանկանում: Իրավունք ունենալով ամբողջի ներքին սկզբի հետ հաղորդակցվելու միջոցով տիրել ամեն ինչին՝ արա փոխարեն մենք ինքներս ենք ցանկանում սկիզբ դառնալ և առանձնանալով բոլորից՝ բոլորին դրսից տիրել: Մենք ցանկանում ենք սկիզբ դառնալ և, արդարև, մեղքի, հիվանդության և մահվան սկիզբն ենք դառնում: Փոխարեն այն բանի, որ միակ գերագույն բարիքը բաղձանք, որում ամենայն ինչ է, որում բոլորը բարոյական կերպով միավորված են, բոլորը համերաշխ են իրար հետ, մենք բազում բարիքներ բացառապես մեզ համար ենք ցանկանում, առանձնանում ենք բոլորից՝ ամեն ինչի մեջ մերը փնտրելով, և որևէ բանի վրա կանգ առնել չենք կարողանում: Այն բանի փոխարեն, որ ամբողջական ճշմարտությունը նկատի ունենանք, որի մեջ բոլոր իրերն ու պատկերացումները միավորված են ներքին բանական կապով, մեր միտքը կանգ է առնում առանձին առարկաների վրա, վերլուծում է, տարրալուծում է դրանք ոչ թե տարբերության միջոցով դրանց միությունն ավելի լավ հասկանալու, իր իմացության մեջ դրանք իրար ամուր կապելով մի ամբողջություն կազմելու համար, այլ՝ այլևս ամբողջականին բնավ էլ չվերադառնալու, ավելի հեռու, մինչև անսահմանություն իր առարկան մասնատելու՝ ողջ տիեզերքը անվերջանալիորեն մամր և ներքնապես ոչնչով անկապակից մասնիկների մեռյալ խառնախմբի վերածելով: Վերջապես, մեր զգայական հոգին փոխանակ ոգու գործունեության համար հեմարան և միջոց ծառայելու, զգացական ոլորտում բարիքի և ճշմարտության բովանդակությունը մարմնավորելու՝ տալով նրան գեղեցկության պատկերը, մեր զգայական հոգին տրվում է մարմնական կյանքի կույր և անչափելի ձգտումին, որը չունի ներքին նպատակ, այլ միայն մի արտաքին վախճան՝ մահվան և ապականության մեջ:

Փոխանակ ընկալունակ կերպով իրականին ուշադրությունն ուղղելու, իր մեջ նրան տեղ տրամադրելու և ընդօրինակելու նրան՝ դառնալով նրա լրության մոր կենդանի պատկերը, մենք կենտրոնանում ենք մեզ վրա և, սրելով մեր բոլոր հոգևոր ուժերը, կարծես թե դրանք այդ սայրով ուղղում ենք իրականի դեմ՝ միայն կործանում և քայքայում առաջ բերելով:

Մեր կամքը միաբանության փոխարեն տիրապետության է ձգտում, մեր միտքը համընդհանուր իրականն ըմբռնելու փոխարեն տրվում է անվերջորեն շատ առարկաների մասին կամայական դատողությունների. վերջապես, մեր զգայական հոգին հոգևոր ուժերով նյութին կենդանության տալու փոխարեն՝ նյութով անիմատ չափույթի է միայն ձգտում:

Եթե մեր հոգին պահպաներ իր ներքին առիթը՝ աստվածային կատարելությունն իր կյանքի իրողություն և նպատակ ունենալով, նա ոչ մի արտաքին սահմանափակումների կարիք այլևս չէր ունենա և կօգտվեր ճշմարիտ ազատության և անսահմանության լրությունից: Բայց, երես թեքելով Աստծուց, նա իր բնությունն է աղավաղում, վատ պարունակությամբ է լցվում, անիմատ հմտություններ է ձեռք բերում

և կեղծ անսահմանությամբ տարվում՝ անսահման ինքնասիրությամբ, աննպատակ իմաստակությամբ, զգայական ցանկությունների անչափությամբ: Այս անպատռու մով, մեր հոգին Աստծու և բնության միջև իր իսկական դիրքում վերականգնելուց առաջ, մենք պետք է նրան մաքրենք ձեռք բերված չարից: Մեր հոգու կեղծ անչափությունը պետք է չափավորվի և սահմանափակվի մեր բարի կամքի հետ զուգակցված շնորհի գերգործությամբ: Մեր աղավաղված բնության վերաբերմամբ այդ գերգործությունը ժխտողաբար է արտահայտվում՝ ժուժկալության կամ լայն իմաստով պաշտի պարտականության մեջ: Սա մեր սկզբնական, արմատական պարտականությունն է մեր բնության վերաբերմամբ: Ամեն տեղ, ուր բնական ուժերի անչափելի անհագուրդ ձգտում է ի հայտ գալիս, անհրաժեշտ է ժուժկալություն, ինքնասահմանափակում կամ պահք:

Կա հոգևոր պահք. ժուժկալում ինքնասեր և իշխանասիրական գործունեություններից, հրաժարում մարդկային պատվից ու փառքից: Այս պահքը հատկապես անհրաժեշտ է հասարակական գործիչներին: Նրա սկզբունքն է. մի փնտրիր իշխանություն և տիրապետություն, եթե կոչված ես իշխելու և տիրելու, մայիր դրանց իբրև ծառայության: Ամեն անգամ, երբ վիճակվում է առանց մերձավորների համար օգուտի հայտարարել ինքն իր մասին, ցույց տալ սեփական գերազանցությունն ու ուժը՝ ժուժկալիր դրամից. մի սնիր ինքնասիրությունդ :

Կա մտավոր պահք. ժուժկալում մտքի միակողմանի գործունեությունից, հասկացությունների և պատկերացումների անպտուղ և անվերջ խաղից, առանց իմաստի և նպատակի առաջադրվող մշտական հարցերից: Այս պահքը հատկապես անհրաժեշտ է փորձված Հեղափոխի սասցվածքը մոռացության տվող գիտուն մարդկանց. բազմադիտությունը միտքը չի կրթում: Այս մտավոր պահքի սկզբունքն է. մի փնտրիր իմացություն հանուն իմացության, որն անօգուտ է և՛ մերձավորի, և՛ Աստծու գործի համար: Մտքերի մեջ նորույթ և յուրօրինակություն մի փնտրիր: Ամեն անգամ, երբ վիճակվում է ընդհանուր բարոյության հետ չառնչվող կարծիք արտահայտել, ժուժկալիր դրամից: Գիտական իմացություններին չափազանցված նշանակություն մի տուր, քանզի գիտությունը միշտ երկու անխուսափելի սահման ունի. գիտնականների կամխակալ կարծիքները և գիտական նյութի թերիությունը: Մտավոր գործունեությունը բարոյական պահանջներին ենթարկիր: Մի խոսքով. մի սնիր դատարկ իմաստակումը :

Վերջապես, երրորդ, բուն իմաստով, պահքը՝ զգայական հոգու պահքն է, այսինքն՝ ժուժկալում զգացական հաճույքներից, որոնք մտքի գիտակցությամբ և հոգու իշխանությամբ անկառավարելի և անչափավորելի են: Ֆիզիկական պահքի հիմնական և ամենաէական տարատեսակը միշտ արդարացիորեն արյունոտ կերակրից, տաքարյուն կենդանիների մսից ժուժկալումն է համարվել, քանզի այս կարգի կերակուրը ուղղակի հակասում է մեր ֆիզիկական գործունեության իդեալական կոչմանը: Մեր զգայական կյանքի ճշմարիտ խնդիրը երկրի այգին մշակելն է, անկենդանը կենդանի դարձնելը, երկրավոր էակներին ավելի մեծ ինտենսիվություն և կյանքի լրություն հաղորդելը, նրանց կենդանացնելը: Սրա ուղիղ հակադրությունն է

կենդանի էակներին սպանելը, հատկապես այնտեղ, ուր կյանքն առավել մեծ ուժգնության և լարվածության է հասած, ինչպես տաքարյուն կենդանիների պարանոթային: Քանի դեռ մենք ի գործ ունենք կենդանություն տալ անկենդան բնությանը, մենք առնվազն պետք է, որքան հնարավոր է, քիչ մեղքենք կենդանին: Այսպիսով, ֆիզիկական պահքի նախնական պարտականությունն ուղղված է ոչ միայն մեր զգայական հաճույքների սահմանափակմանը, այլև արտաքին բնության նկատմամբ մեր անմիջական հարաբերությունների շտկմանը:

Մենք չենք կարող միանգամից շտկել այդ հարաբերությունը, չենք կարող բոլորովին խուսափել մահ պատճառելու անհրաժեշտությունից, որպեսզի ապրենք, բայց մենք կարող ենք և պարտավոր ենք աստիճանաբար թուլացնել և նվազեցնել այդ անհրաժեշտությունը: Եթե այս չարիքը չի կարող իսպառ ոչնչացվել, ապա, ամեն դեպքում, որքան քիչ լինի այն, այնքան լավ, և մենք պետք է կարելիովն չափ հանգեցնենք այն նվազագույնի: Այս պատճառով, Ս. Եկեղեցու իմաստությունը ֆիզիկական պահքի բազում աստիճաններ և տարատեսակներ է ընդունում՝ չպահանջելով անվերապա Ժուժկալություն:

Ֆիզիկական պահքի ընդհանուր սկզբունքն է. մի սնիր զգալունակությունը, սահմաններ դիր այն սպանությանն ու ինքնասպանությանը, որոնց անխուսափելիորեն հանգեցնում է նյութական հաճույքների հետամտությունը, սրբիր և վերափոխիր քո սեփական մարմինը, որպեսզի նախապատրաստես քեզ համաշխարհային մարմնի կերպարանափոխմանը:

* * *

Աղոթքը, ողորմությունն ու պահքն անձնական կրոնական կյանքի երեք հիմնական գործողություններն են, անձնական կրոնի՝ երեք սկզբունքները: Ով չի աղոթում Աստծուն, չի օգնում մարդկանց և ժուժկալությամբ չի ուղղում իր բնությունը, նա օտար է ամեն տեսակի կրոնի, եթե նույնիսկ իր ողջ կյանքում կրոնական նյութերի մասին է մտածել, խոսել և գրել: Կրոնի այս երեք հիմնական գործողություններն իրար հետ այնպես սերտորեն են կապված, որ մեկը մյուսից անջատ որևէ գործություն չունի: Եթե աղոթքը մեզ բարեգործության չի դրդում և չի զսպում մեր զգայական բնությունը, ապա այդպիսի անբարի և անգոր աղոթքը ճշմարիտ աղոթք չէ, նրանում շահամոլության, կեղծիքի և ինքնասիրության ինչ-որ խառնուրդ կա: Ծիշտ այդպես էլ, երբ ողորմությունն աղոթքը նախապայման չունի և ժուժկալությամբ չի ուղեկցվում, այդ դեպքում այն առավել թուլականություն է արտահայտում, քան իրական սեր: Ծշմարիտ ողորմությունը բարձրագույն արդարություն է, այդ իսկ պատճառով այն պետք է հիմնվի զերագույն շնորհի վրա: Վերջապես, ինքնասիրապետման վարժանքի համար ինքնասիրաբար ձեռնարկված պահքը, կամ թե փառասիրությամբ դրդվածը, եթե նույնիսկ գործություն է տալիս, ապա՝ ոչ ի բարին, իսկ պահքը, թեկուզև եթե աղոթքով է զուգակցված, բայց ողորմությամբ չի շաղախված, այն զոհն է մնում, որի մասին ասված է. ողորմություն եմ ուզում և ոչ թե՝ զոհ: Այս

երեքի՝ աղոթքի, ողորմության և պահքի միացության մեջ Աստծու միասնական շնորհն է ներգործում, որը ոչ միայն մեզ շաղկապում է Աստծու հետ (աղոթքի ժամանակ), այլև մեզ մտանցում է ամենաբարի (ողորմության ժամանակ) և ոչնչի անկարող (ժուժկալության ժամանակ) Աստծուն :

Կրոնական կյանքի այս երեք հիմնական գործողությունները միաժամանակ կրոնական մարդու հիմնական պարտականություններն են: Մենք կարող ենք պարտավորված լինել միայն նրան, ինչի ընդունակ ենք: Մեր անձնական կարողությունից դուրս է մեր ամբողջովին Աստծու հետ միավորումը, մարդկության փրկությունը և աշխարհի բնության վերափոխությունը: Այդ պատճառով էլ կրոնը մեզանից ոչ մեկին անձնապես չի ասում. միաձուլվիր Աստծու հետ, փրկիր մարդկությանը, վերածնիր տիեզերքը: Բայց մեր կարողությունից դուրս չէ Աստծուն աղոթելը, կարիքավոր մերձավորներին օգնելը և սեփական բնությունը պահեցողությամբ վերափոխելը: Սա մեր կարողության սահմաններում է և սա մեր պարտականությունն է, մեզանից յուրաքանչյուրիս անձնական պարտականությունը:

Երեք կրոնական պարտականությունների իրագործմամբ մարմնավորվում են նաև երեք կրոնական առաքիճությունները. Աղոթիր Աստծուն Հավատքով, մարդկանց բարությունն արա սիրով և Հաղթիր քո բնությանը զալիք Հարուժյան Հույսով: Սրանով սպառվում է մեր վերաբերմունքը Աստծու շնորհի մկատմամբ, որը մեր ներսում է: Բայց Աստծու շնորհը բացահայտվում է նաև մեզանից դուրս՝ աշխարհի և մարդկության կյանքում: Ներքին և արտաքին կյանքի, մի անձի և նրա հավաքական միջավայրի միջև իրական բաժանում չի կարող գոյություն ունենալ, այդ իսկ պատճառով մենք պետք է ճանաչենք պատմական հայտնության էությունը և այն նոր, արդեն ոչ անհատական, այլ հասարակական պարտականությունները, որոնք այն մեզ վրա է դնում:

**ՌՈՒՍԵՐԵՆԻՑ ԹԱՐԳՄԱՆԵՑ
ԳԵՎՈՐԳ ԱՐԵՂԱ ՍԱՐՈՅԱՆԸ**

